

ու սոսկալի ջարդ կ'ընէր երկու բանակներուն մէջ, երբ օսմանեան հետեւակներու գունդ մը սաստկութեամբ ուսաց աջ թեւին վրայ ինտրով, զանիկա աւրել սկսաւ :

Այն միջոցին ուսաց զօրապետը իր բոլոր պահեստի զօրքերը աջ թեւին օգնութեան խրկեց, և բոլոր ձիաւորներն ալ կայսերական զօրաց վրայ քալեցուց : Օսմանեան ձիաւորներն աւ միջպէս անոնց դէմ էլան, բայց ձիերն յոգնած ըլլալով շարժմունքնին աղէկ չ'կրցաւ յաջողիլ : Ուստի կայսերական հետեւակ զօրքերը պարտաւորեցան քիչ մը ետ քաշուելու կատարեալ բարեկարգութեամբ և ուսաց ձիաւորները սուխներով (սինկիւ) էտ մէջը իրենց վրայ եկած ատեննին :

Կորուստը երկու կողմէն ալ մեծ եղաւ : 4500 մեռեալ և 7 էն 8 հարիւրի չափ վիրաւոր կը հաշուեն . բայց որովհետև Օսմանեան զօրաց թիւը նոթներն աւելի վարպետ ու ընտիր են, Ռուսաց կորուստը աւելի շատ պիտի ըլլայ :

Ռուսերէն զօրապետ մը մեռաւ և երկու զօրապետ վիրաւորուեցան :

Օսմանեանց կողմէն Հասան փաշան մեռաւ և Սուսթաֆա փաշան ձախ թեւէն վիրաւորուեցաւ :

« Պատերազմէն երկու ժամ ետքը՝ Ռուս սպայ մը Օսմանեանց յառաջապահներուն եկաւ, և երկու օրուան զինադադարով խնդրեց՝ մեռեալները թաղելու և վիրաւորները վերջնաբերու համար :

« Օսմանեանց յառաջապահները որ երկու գունդ (այս) ձիաւորէ կը բաղկանան իսմայիլ փաշային հրամանատարութեանը տակ, Հաճի-Վէլի Քէյ քանակած են : Օրոսաց մեծագոյն մարտ յառաջապահներուն ու կարտի մէջ տեղը բանակած են . վերջ ջապահները՝ Օարիֆ Սուսթաֆա փաշային հրամանատարութեանը տակ կարս կեցած են : »

Աստղեկութիւնները թէ որ ստուգենէ, կը ցուցնեն, որ Ռուսերը Պաշայի մօտ յաղթող եղեր են, Չիւրիւք-Տէրէի բովալ յաղթութեամբ պատերազմը են : Սակայն այս երկու փոքրիկ յաղթութիւնները՝ Վանուբի վրայ և ուրիշ ամեն տեղ կայսերական զօրաց բրած փառաւոր յաղթութիւններուն հետ բաղդատելով բան մը ըսել չեն, և Ռուսիոյ կայսրութեանը մէջ փոփոխութիւն մը չեն կրնար ընել :

Կայսերական հրամանաւ՝
Կ. Պօլսոյ բանակին սպարապետ

Տարպաշօր Մէշիտ փաշան՝ կայսերական անձնապահ զօրաց սպարապետ անուանեցաւ փոխանակ Սէլիմ փաշային :

Սօքում Վալէի զինուորական կատարիչ Սուսթաֆա փաշան Պաթուրի բանակին սպարապետ անուանեցաւ փոխանակ վերջնաբերու Սէլիմ փաշային, որ միանգամայն կայսերական անձնապահ զօրաց և Պաթուրի բանակին սպարապետ էր :

Կ. Պօլսոյ յունաց գերապատիւ պատրիարքը լսելով, որ յունաց ազգէն ոմանք կայսերական տէրութեան գաշտակից և օգնական Մեգլիոյ ու Վալիոյ զօրքերուն դէմ ատելութեան հուգի մը կը ցուցնեն և թշուամբար կը վարուին անոնց հետ, հարկ սեպեր է հետեւեալ շրջաբերական կոնզակը ուղղել իր ժողովրդոցը, որուն մէջ մեր Օքոստափառ ինքնակալին գերազանց բարեմասնութիւնները և Մեգլիոյ ու Վալիոյ տէրութեանց արնուական վարմունքը արժանապէս գովելէն ետև, Ռուսիոյ անիրաւ գործերը և վերջնաբերու յայտնուան դատապարտելի վարմունքը շարաքար և խտիր կը կըշտամբէ :

Շքեբախի

ԱՆԹԻՄՈՍ

Շորհիւն Մտուոնց Մքք եպիսկոպոս Կ. Պօլսոյ, Նոր Հռոմայ, և տիեզերական Պատրիարք :

Արժանապատիւ եկեղեցականք մերոցս ուղղափառ մեծի Եկեղեցւոյ, յարգւոյ քահանայք և կրօնաւորք եկեղեցեացն Վալիոյ և Վասիլիոյ, և դուք ամենեքին օրհնեալ քրիստոնէեայք, շնորհք և խաղաղութիւն Ռարձրելոյն եղից ընդ ձեզ :

Ամեն խոհական ու մտացի մարդ պարտաւոր է միշտ անկեղծութեամբ երախտագէտ ըլլալու իր բարերարին . մանաւանդ երբոր մտած է, որ կրած բարերարութիւնը փոքրիկ ու աննշան օգուտ մը տեսնելու վրայ չի կայանար, այլ բարերարելոյն կենացը, պատուոյն ստացումըն, ապահովութեանը և ընդհանրապէս բարօրութեանը վրայ կը տարածուի : Ամեն մարդ գիտէ, որ այս օրէնքը թէ բնական թէ քաղաքական և թէ կրօնական նկատմամբ հաստատուն և անշարժ հիմանց վրայ հաստատուած է, որոնք խախտողը բռնութեամբ չար ու ամորթի է և վեհանաձ զոհերով ստացած բարիքը արժանապէս ճանձնալու անկարող . անանկ վատ մարդը աշխարհի առջև սպեւրախ անուներ կը ժառանգէ : Ահա ա-

սանկ ապերախտութիւն մը մեր ազգաւ կիցներէն ոմանք կ'ընեն եղեր Վալիոյ ազգոց զօրքերուն, ինչպէս որ ցաւօք սրտի առ օրերս իմացանք, կը յանդիմանին եղեր անվայել ու թշուամական գործեր ընելու Վալիոյ ազգոց զինուորներուն . զանոնք առանձին տեղեր տեսած ժամանակին, կը ծաղրեն կ'արհամարհեն ու կը նախատեն և մինչև անգամ ծովը հրել ձգել կ'ուղեն եղեր : Այս վարմունքը ոչ միայն բարբարոսական և դատապարտելի է ամեն մտացի մարդոց առջև, այլ և մեծ ապերախտութեան նշան մըն է այն լիբր ու անմիտ մարդոց վրայ, որոնք պէտք էր մտածէին այն սարսափելի պատասխանատուութիւնը որ բոլոր ազգերնուս վրայ կը ձգէն . երբ ընդհակառակն պարտաւոր էին սիրելու և պատուելու այն զինուորները՝ իբրև բարեկամ և դաշնակից մեր օգտաւ փառաւորապէս թ Մեքնակալին, որոնք եկեր են անոր տէրութեան իրաւունքը պաշտպանելու Ռուսիոյ պահանջմունքներուն դէմ, և պահպանելու անոր շահերը, որ մերն ալ են, անոր սիրելի և հաւատարիմ հպատակացս, որ Նորին Վեհափառութիւն բարերար հովանիին տակը լիակատար հանգրտութեամբ ու աղատութեամբ այնչափ քաղաքական ու կրօնական արտօնութիւններ կը վայելէր, որոնք Նորին Վեհափառութիւնը վեհանաձն առատաձեռնութեամբ պարգեւեր է մեր ազգին : Այս է ահա հիմնական պատերազմին նիւթը, որուն համար բարեկամ և դաշնակից տէրութիւններն իրենց նաւատարմիցներն ու բանակները սոք հանելոյն ամբաւ ծախք ընելով և մարդ զոհելով : Աւստի բարոյականի դէմ է ասոնց փոխարէն շարութիւն ընել այն մարդոցը, որ մինչև անգամ իրենց կենցաղը կուտան կայսերական կառավարութեան ու մեղք համար : Արեւմտեան բաւականապէս ցուցնելով ամենուր թէ որչափ պէտք է շնորհակալ ըլլանք մեր Մեքնակալին այս դաշնակիցներուն ու օգնականներուն, կը փութանք այս եկեղեցական գրովը հարաբար ձեզ խրատելու և սաստկապէս պատուիրելու, որ մեր ազգաւ կիցներէն որոնք որ այնպիսի քրիստոնէական հոգւոյ և հպատակութեամբ պարտուց հակառակ գործեր ըրած են, այսուհետև զգուշանան և ընդհակառակն ջանան բարեկամբար վարուելու անոնց հետ, և զգալի փորձեր տալու իրենց անկեղծ շնորհակալութեանը՝ փոխարէն այն ներութիւններուն ու վտանգներուն, որ այս զօրքերը յանձն առած են՝ Օսմանեան կայսրութեան իրաւունքները պաշտպանելու համար

Ռուսիոյ պահանջմունքներուն դէմ, որ ուղղափառութիւնը պաշտպանելու պատրուակաւ՝ քաղաքական նենգաւոր դիտաւորութիւններ ծածկած էր, ինչպէս որ զանազան առիթներու մէջ հասկըցուց . և այսպէս չար ու վնասակար դիտաւորութիւններ ունեցած ժամանակը՝ հրապարակաւ ուրիշ բաներ կը հրատարակէ, և կ'աշխատի պարզամիտները պատրելու իր խաբուսիկ խտածունքներովը, բոլոր աշխարհի քաշած ներութեանցը պատճառը ըլլալով, և մեծ վնաս տալով աղքատներուն որ հազիւ կրնան իրենց աւուր պարէնը ձեռք բերել : Սակայն ամենարդարն Մտուոն, որ մարդոց սրտին մէջն եղածը գիտէ, չ'թողուց որ մարդկութիւնը փառասեր դիտաւորութիւններով բացուած պատուարով մը չարիքներուն տակը անպատու հասնընչուի . այլ արդարին կողմը բռնելով կայսերական զօրաց և բարեկամ ու դաշնակից տէրութեանց ղէնքերը օրհնեց, որով Միխայիլի մէջ կատարեալ յաղթութեամբ մը թշուամաց բանակը ջարդաբեւոյր եղաւ փախաւ, ու իր սահմաններէն անդին վախտուեցաւ : Արեւմտեան քաղաքները ալ ճանչնալով Ռուսիոյ տէրութեան ստախտութիւնը, մի հաւատարմ և մի ախտէք կախէք այնպիսի բարբառմունքներու որ իր հակա մարդոց ու շարքութեանը արժանի չեն : Այլ, ինչպէս որ միշտ հաւատարիմ ու անկեղծ եղած էք կայսերական կառավարութեան, և հպատակութեան ու անձնատուիրութեան անարատ զգայմունքներ ցուցցած էք այս հոգոք տէրութեան, որ մեր ամենուս սնուցիւն ու բարերարն է, նը մանապէս այս օրուան օրս մը աւելի պէտք է շատցնէք ձեր կատարելն հնարանքով անկեղծ հաւատարմութեան ու անձնատուիրութեան սպանցոյցները : Իստ որում այս տէրութիւնը, որ երբէք դադարած չէ իր ամեն հպատակներուն առ հասարակ ինամբ տանելու, հիմա ևս աւելի փութով կ'ըջալի մեզ հանգիստ աւրեցունելու իր բարերար հովանիին տակը, ազգային և կրօնական լիակատար աղատութեամբ, այն հին արտօնութիւններուն համաձայն որ մեր ամենաիրելի Մեքնակալը իր բնական բարեսրտութեամբ վերահաստատեց կայսերական բարձր հրովարտակաւ :
Վնասապէս քրիստոնէական պարտաւորութիւն մը կատարած պիտի ըլլաք՝ անկեղծ բարեկամութեան զգացմունքներ միշտ ունենալով բարեկամ և դաշնակից տէրութեանց համար, որոնք բարի դիտաւորութիւններով ու անկեղծ մտք կուգան Ռ. Վրան հետ

Ի Ա Ն Ա Ս Ի Ր Ե Ա Ն

Ռ Ա Տ Ի Կ

Ն Ա Ս Ա Ս Տ Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Կ

(Շ ր ք ան ար ք ան ք)

Գ Ա Ո Ւ Խ Ժ Թ

Մ ր ց ութ ւ ք :

Ի արեւելքը թագու հին ուրախութեամբ ու սիրով ընդունեցին, վասն զի գեղեցիկ էր և դժբախտ : Այն միջոցին քաղաքը հանդարտութեան մէջ կ'երևար . Վրկանից իշխանը պատեւրազի մը մէջ սպաննուած էր . Ի արեւելքը յաղթող ելելով հրատարակեցին որ իրենց ընտրելու թագաւորը Վրգարտէին պըր ըլլայ . չուղեցին որ աշ-

խարհքիս առաջին գահը՝ որուն վրայ Վրգարտէին ամուսինը և Ի արեւելքի թագաւորը պիտի նստէր, խորամանկ հնարքներով և նենգութեամբ ստացուի : Ռուստի երգում ըրին, որ ամենին քաջ և իմաստուն մարդը թագաւոր ընտրեն, Վրգարտէն քանի մը մըն հետև ընդարձակ ասպարէզ (մէյտան) մը պատրաստեցին շքեղ նստարաններով շքեղ պատանդ : Ամեն մէկը ասպարէզին ետևի դին առանձին զատ սենեակ մը ունէր, ուր տեղ սնտես և անձնօթ պիտի կենար : Կախ պէտք էր չորս անգամ նիղաի խաղալ . անոնք որ յաղթութեամբ չորս մարտիկներու յաղթէին, իրենց մէջ ալ նորէն իրաւունք հետ պիտի մըցէին, ուստի ալ որ ասպարէզին վերջին տեղը մնար՝ յաղթող պիտի հրատարակուէր : Չորս օրէն ետքը յաղթողը նոյն զենքերով նորէն հին պիտի գար, և մագերուն առաջարկած հանելուկները պիտի լուծէր : Թէ որ հանելուկները չի մեկ-

ներ, թագաւոր չի պիտի ըլլար, և նորէն մըցութիւնը պիտի սկսէին, մինչև որ մարդ մը գտնային որ երկու մըր ցանակներն ալ կարող ըլլար աւելելու . վասն զի անպատճառ անանկ թագաւոր մը կուգէին, որ ամենին քաջ ու իմաստունը պէտք էր ըլլար : Թագուհին այն միջոցին զգուշութեամբ պիտի պահուէր . միայն հրաման կար աւնոր, որ քաղով մը ծածկուած՝ խաղերուն ներկայ գտնուի . բայց մըցողներուն հետ ամենին չի պիտի խօսէր, որպէս զի շնորհ կամ անիրաւութիւն չի մանար բանին մէջ :
Վրգարտէ այս կարգադրութիւնը Օտտիկին իմաց կուտար, յուսալով որ Օտտիկ իր սիրոյն համար աւելի քաջութեամբ և համաճարով կը լսեցուի : Ռուստի Օտտիկի համար ելաւ, աղաչելով Մտուկան որ իր քաջութիւնը զօրացունէ ու միտքը լուսաւորէ : Հանդէսին առջև իրիկուներ Վրգարտայ եղբրը հասաւ, իր նշանագիրը մըցողներուն ցուցալը անցունելու տուաւ,

և օրինաց համաձայն դէմքն ու անուներ պահեց, ու վեճակով իրեն ինկած սենեակը գնաց նստաւ : Գատար բարեկամը որ պարագ սեղը զանիկա երկար ժամանակ Նրգարտի մէջ բնտուէրէն ետև Ի արեւելք գարձեր էր, Թագուհին կողմէն անոր ամբողջ սպառազնութիւն մը բերաւ, նոյնպէս և ամեննախի պարսիկ ձի մը խրկեց : Օտտիկ հասկըցաւ որ առ պարզէնները Վրգարտէին խրկածն էր, ու իր քաջութիւնն ու սէրը նոր զօրութիւնն ու նոր յոյսեր աւին :
Հետեւեալ օրը թագու հին եկաւ գոհարարաբար ամբողջութիւն մը տակ նստաւ, ու մըցարմին նստարանները զանազան աստիճանի անձինքներով լեցուեցան : Մըցողները ասպարէզը ելան, ու ամեն մէկը իր նշանագիրը մոգպէսին ոտքին տակը բերաւ դրաւ . վեճակ ձգեցին նշանագիրներուն վրայ և Օտտիկինը ամենէն վերջը ելաւ : Առաջին մըցողը Վրգարտայ անունով ամենա հարուստ, սաստիկ սնտիաւ, անարի,

միարանութեամբ պատերազմելու : Ասոր համար, ոչ միայն զգուշանալու էք զժողովրդեան առիթ մը տալէ դաշնակց զորաց, ինչպէս որ անմիջ չարամտութեամբ ըրեր են, այլ և նոյն երախտագրութեան արացոյցները աւանդ ալ տալով, թէ կայսերական կառավարութեան և թէ դաշնակց տեղութեանց համարութիւնն ու սերը ստանալու ընդ ընդ էք, ամենայն վտակով ձեր պարտքը կատարելով և մեզի հետ ազօրթ և խնդրուածք ընելով : Ամենակալին մեր օգուտախոս արարածը և ինքնակալին Սուլթան Ապտուլ-Իւլ-Մէճիտ կայսեր համար, որպէս զի պահանջներ Նորին վեհախորհուածութիւնը որպէս բիւք աչաց, և երկար կեանք պարգեւէ անոր, և իրեն յաղթող բանակին և բարեկամ տեղութեանց զէնքերուն առաջնորդէ, յաղթութիւններ շնորհելով թշնամեաց վրայ և զանոնք զօրացուներով այս օրհնեալ պատերազմին մէջ, որ կ'ընեն ցանկալի խաղաղութիւնն ու հանգիստութիւնը վերահաստատելու համար : Բարեբաղն ստուած անոր վեհանախ դաշնակիցներուն ալ իրենց քաջութիւնը արժանի վարձքեր և ամեն ցանկալի բարութիւն շնորհէ, և իր շնորհօք լեցնել անոնք ամենքը որ մեր վեհախորհուածութիւններուն կատարմանը բարեհախոսն իրան իրանով ձեռնառն կ'ըլլան :
Վ. մեն :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆՎԻՒԱ : Պատերազմի պաշտօնատան կողմէն հետեւեալ յայտարարութիւնը հրատարակուեցաւ յուլիս 21 ին :
« Տաճկաստան իրիւրեւան անդրկական բանակին մեծազոյն մասին մէջ ընչացք (պլլըք) թող տալ օգուտախոր գաւառներով ընդհանուր հրամանատար զօրացուները բոլոր բանակին մէջ առ վարութիւնն ընդունելու հրաման կուտայ հետեւեալ կանոններով, որ թէ անբաժան ներքին գաւառներուն և թէ գաղթականութեանց մէջ պիտի պահուին :
Արիւր մատնաչափ միջոց թող պիտի արուի բերնին ծարէն մինչեւ ծընծաներուն վրայ բուսած կէս մօրուքը : Օճիտին վարի կողմը, թուշը և պարսկացիին վերի կողմը գտնել երկու մատնաչափ անկ ածրուած պիտի ըլլայ անանկ որ հոն մազ մը չի պիտի տեսնուի :
Վ. մեն աստիճանի զինուորականը կարող են ընչացք թող տալու թէ որ ուզեն :

անցաջողակ և անմիտ մարդ մին էր : Ասոր ծառաները զինքը համոզեր էին թէ, թագաւոր ըլլալու մարդ մին է : Ինքն ալ պատասխան տուեր էր թէ, ինծի պէս մարդ մը պէտք է որ թագաւոր ըլլայ : Աւտի տարէն մինչեւ գլուխը զինուոր էր, կանանց կիսուած ծով (մինէ) սակի զրահ մը հագեր էր, գլուխը կանանց փետուրէ ցցուներով սաղաւարտ մը դրեր էր, և ձեռքեր կանանց ժողովներով զարդարուած նիւզի մը տակ էր : Երբ մին կառավարելու կերպէն հասկուեցաւ որ Վստուած այնպիսի մարդ մը թագաւորութիւն գահին արժանի չէր սեպեր : Առաջին վրան յարձակող հակառակորդը զանկալ թամբին (էյեր) վրայէն հանեց : Երկրորդը ձիուն գաւառին (սաղը) վրայ պառկեցուց, ստուերները վեր ու թեւերը տարածուած : Իրագոստ տարէն նստած, բայց անանկ անձանի կերպով մը, որ բոլոր հանդիսատեսներն սկսան ծիծաղել : Իսկ երրորդը հաւաքողը նիւզակը գործածել անկամ

Արեւելի մէջ ծառայող զօրքերը իրենց մօրուքին ու կիսամօրուքին ուրիշ ձեւեր կրնան տալ հրամանատար զօրացուներին հաւանութեամբ որչափ ժամանակ որ իրենց ծառայութիւնը տեսնու ըլլայ : »

ԳԵՐՄԱՆԻԱ : Սիւրիսիս յուլիս 29 ին հեռագրով ըսր անուեցաւ, որ Սարսիսիսի Վ. թագաւորը յիշեալ քաղաքէն դարձած անունը, Պրէն պիւքէլը մօտ կառքէն վար ինկեր է, ու ձիէն կից (չիֆթէ) մը աւաւելով անմիջապէս մեռեր է :
ՍՊԱՆԻԱ : Ապտուրութեան խոռ վտակները բողբոջելու գաղտնիքաւ աս երկրին մէջ ժողովրդեան պահանջմանը ներքին ընդունուելովը :
Իսպանիայէն զօրացուներին կառավարութեան պաշտօնեաց ընտրուելը կառավարութեան արտաստիտ գիտաւորութիւններուն նշան մը սեպուելու ամեննէն : Թագաւորին ինքզինքը ժողովրդեան պատուին ու արգարտարութեանը յանձնելով, և սպանիացուց արքին ու իր անունին իրաւունքներն արգարտելու համար ամեն կերպ երաշխաւորութիւնները տալով, բոլոր ժողովրդեան սէրն ու վրաստանութիւնը արթնցուց :

Վհաւասիկ Վ. թագաւորին հանած յայտարարութիւնը որ Սարսիսի լրտիրը հրատարակած է :

Սպանիայէն .
Իսկ մը տղաքի սխալմանը կարող եղան զիս ձեռն բաժնելու՝ ժողովրդեան ու անունին մէջ անտեղի կոտորածներ ձեռնելով : Իմ զաւակներուս (ժողովրդեան) բարօրութեանը և արտաութեանը հակառակ զգացմանները զիս զնելով, սիրտ զօր պարտեցին, բայց որովհետեւ ճշմարտութիւնը վերջապէս ձեր թագաւորին սկսեց հասաւ, կը յուսամ որ սերը և վստահութիւնը վերստին ձեր պատէրուն մէջ կը ծնանին ու կը հաստատուին :
Իրենց արտաստիտութիւնը և իմ կրօնաւորները պաշտպանելու համար Սպանիացուց արքին բոսձ գոհերը զիս պարտական կրնան աննելն չ'անուշաւ իմ ներկայացուցած սկզբունքներս : այն սկզբունքները որոնք միայն կրնամ ներկայացուցնել, բոլոր կ'ուզեմ արգարտութեան սկզբունքները, ստանայ որպէս ազգ մը այս անտեղիս արժանի չի կրնար ըլլալ :
Տերութեան զինուոր հետ ժողովրդեան միութեամբ զիս հինուած նոր դար մը սկսելով, այն սխալ անցքերուն վերջին տուերն անդամ անհետ պիտի ընն, որ էս ամենէն առաջ կը փախորթ ձեր տարբերութիւններն ըլլալու :
Վրացաւ ի խորք սրտէ պատահած դժբաղդութիւնները, և կը շնորհակալուիմ ինձմար զանոնք մտաշուշուելու :
Վստահութեամբ և համարձակ զիս ազգին արգարտութեանը կը յանձնեմ : Կարծի մարդոց զգացմանները միշտ զիս մէջ : Այստեղեան իմ ժողովրդը զիս հետ պահելու և զանոնք կատարելով միտաբանութիւն բան մը կարող չ'ըլլայ խանդարելու : Ես միտքս դրած եմ ամեն բան զգնել երկրին ընդհանուր օգուտին համար, և կը փախորթիմ որ ազգը վերտանի իր կամքը յայտնել իր օրինաւոր երեսփոխաններուն բերնով, և կ'ընդունիմ ու կուտամ այս օրուքն այն ամեն է

արժան չի սեպեց, այլ կեղծ ձե մը ընելով, աջ ոտքէն բռնեց, ու ձիուն վրայ կէս շրջան մը ընել տարով գլուխը արքին աւազին վրայ թագաւորը պատկեցուց : միջարանին վերակացուները ծիծաղելով օգնութեան վաղցնին ու նորէն զանկալ ձիւն հեծցուցին : Չորրորդը հակառակորդը եկաւ, ու զանկալ կա ձախ ոտքէն բռնուին պէս միւս կողմը թագաւորը : Իրագոստ խայտառակութեամբ իր սենեակը տարուեցաւ, ուր օրինաց համեմատ գիշեր մը պիտի մնար : Ինչո՞քը քաջելու ձար շունէր, ու կրտէր : Բնչ փորձութիւն ինծի պէս մարդու մը համար :
Միւս միջոցներն իրենց պարտքը աւելի արեկ կատարեցին, անանկները գտնուեցան, որ երկու և մինչեւ երեք հակառակորդ հետնեակէ յաղթութեան, միայն Օթամ իշխանը կրցաւ չորս հոգի յաղթել : Վերջապէս կարգը Օթամի յաղթէ : Կարգաւ կառուեց ետեւ չորս ձիււոր իրենց երկվարէն վար ձիւնց մեծ վայելութեամբ : Աւս

րաշխարհութիւնները, որով ժողովրդեան և իմ անունին կրօնաւորները կ'ապահովին : Ամենին պատիւը, Սպանիայէն, ձեր պատիւն է, իմ թագաւորութեան, կրօնութեան և մայրութեան պատիւն արգին սեփական պատիւն է, որ օր մը իմ անուն արտաստիտութեան նշանակ բուս : Աւտի չեմ փախորթ ինքզինքը ձեզ յանձնելու, չեմ փախորթ իմ ազգընդամենը ձեր ձեռքը տալու, չեմ փախորթ իմ բազու ձեր արգարտութեան փահանին տակը դրնելու : Գտն զի հաստատութեամբ կը հաստատուի, որ աստիճան ձեզ ձեր պատուին և հայրենաց փրկութեանը գաւառը կրնան : Վերջոստի հայրկաղ կոտորել (Կարթագոն զօրացուներն) պաշտօնեաց խորհրդոյն նախագահ անուանելու և անոր գաղտնիքներուն կատարելու յարկը, որոնք ընդհանուրն բարօրութիւնը նպատակ գրած են, ձեր արեւել փախորթութեան լրանմը ամենայնով փորձը պիտի ըլլան :

1854 յուլիս 26 .
Ե. թագաւորին Վ. թագաւորին :

Աւրիշ հրովարտակալ մը Վ. թագաւորին մինչև հիմա քաղաքական պատճառաւ տրուած բոլոր արտոման և դատապարտութեան վճիռները ընդհատեց, որով բազմամիւ երեւելի անձինք, որ աղաւորութեան համար հաղածուած ու արտոման էին, Սպանիա դառնալու արտաւարութիւն ստացան :
— Սպանիոյ մէջ հաստատուած անժամանակեայ գերադոյն ժողովը հըրովարտակալ զձեռնց :
« Ի յուր Սարթօրիւս և Ժանկիէ Գուլիթի պաշտօնեաց նախագահ եղած ժամանակը կառավարութեան պաշտօնեաց երդններուն ամենքն ալ բաւուին ու գերադոյն ժողովին յանձնուին, որ դատուին :
« Թագաւորին խորհրդոյ ատեալը վերցած է :
« 1837 ին տարագրութեան օրէնքը վերահաստատուած է :
« Տեղութեան գործակալներուն թշնամանք ընելու պատճառաւ դատապարտեալներուն թնդութիւն շնորհուած է :
« Գուրուէն եկած բոլոր լրագիրներուն ու գիրքերուն աղաւորութիւն տրուած է Սպանիա մտնալու և համարձակ ձեռքէ ձեռք պտուելու :

Վհաւասիկ Սպանիայի կառավարութեան նոր պաշտօնեաներուն անունները, որ ժողովրդեան սիրելի ազատամիտ անձինք են .
Իսպանիայէն զօրացուներն պաշտօնեաց խորհրդոյն նախագահ :
Օ՛Տօնէլ զօրացուներն :
Տօն Ժօլէ Ալօնզօ՝ դատաստանական գործոց :
Տօն Գրանտիլլօ Լուիսան՝ հասարակաց շինուածոց :
Տօն Գուանսիլլօ Սանթամարիա՝ Բախը ներքին գործոց :
Տօն Ժօլէ-Սանտէլ Սօլարօ՝ գանձուց :
Ալօնզէ Սարազար զօրացուներն ծո

ախ մնաց որոշելու թէ մրցանակը Օթամը պիտի առնէ թէ Օթամիկը : Աւրիշին սպառապիւնութիւնը կապուած ու կեդոյն էր, նայն գոյնով էր նաեւ սաղաւարտին ցցուելը, իսկ Օթամիկինները սպիտակ էին : Չ'անդիտաններուն մէկ մտքը կապուած աստիճանի մէկ մասն ալ ձերմակ աստիճանի կողմը բռնած : յաղթութիւն կը մտայլէին : Թագաւորին սրուն սիրտը զօր մէջ էր, ձերմակ գոյնին համար առօրթ կ'ընէր :
Արիւր անոնցաններն այնպէս արագութեամբ անց ու գործ կ'ընէին, ու նանկ ձարպիկի հարուածներ կուտային իրարու նիւզակաւ, անանկ ամուր կեցած էին իրենց ձիւներուն վրայ, որ ամեն մարդ բաց ի թագաւորին կը բազմար որ երկուքն ալ Բարեբաղնի թագաւոր ընտրուին : Վերջապէս ձիւներն յաղթելով և նիւզակին խորտակելով, Օթամիկ սա վարպետութիւնը բաւեցուց : Կապուած իշխանին ետեւ անցնելով, յանկարծ անոր ձիուն գաւառ կին վրայ ցատկեց, մէջքէն բռնեց զի

կային գործոց :
Տօն Ժօլէ Բարեբա՝ արտաքին գործոց :
Օ՛Տօնէլ և Սան-Սիլիէլ զօրացուներն Սարազարա անուանեցան :

ՌՈՒՍԱՍՏԱՆ : Վարչախոյն յուլիս 23 թուով հետեւեալը կը գրեն Վիեննայի Բօնի լրագրին :
« Իրեն թէ Բեգրուրիի ձերու կուտի ժողովը համարձակեալ է կայսեր և անոր բռնած քաղաքականութեանը զէմ գանդապելու : Պատերազմին վերջին լուրերուն վրայ ձերակուտին գլխաւոր անդամներէն բազմութիւն անձինք իրենց կարծիքը յայտնելու գերէն յիշատակագիր մը գրելով կայսեր : Այս յիշատակագրին մէջ ըսուած է եղեր, թէ գանդակ անարձգողները չեն կրնար հաւելիլ կառավարութեան արտաքին քաղաքականութեանը, որուն բուր Ներսայս գէմ է : այսու ամենայնիւ կայսրը շարունակել կուզէ սա քաղաքականութիւնը, որուն պատասխանատուութիւնը չեն կրնար իրենց վրանին տանել : Աւտի կը ինքնընեն, որ կայսրը ընդունի Վստարիս ու Բրուսից անբաժանեց ինքզինքնը : Իր զօրքերը Գանուբեան գաւառներէն քաշէ, որն որ ինքն ալ խոստացեր էր, և աւսանկով վերջ տայ աս աղետալի պատերազմին : Շատ երեւելի մարդոց անուններ կուտան, որ սա յիշատակագիրը ստորագրեր են : Գահաժառանգ կայսր ըրդին ալ հաճութեամբ տուեր է, կը սեն : Չի գիտցուի թէ ինչ արդիւնք ունեցեր է աս յայտարարութիւնը : Կայսրը յիշատակագրին աննելուն պէս Գրանտիլլօ գացեր է, և դեռ Բեգրուրուրի գարձած չէ : »

ՌՈՒՍԱՍՏԱՆ : Վարչախոյն յուլիս 23 թուով հետեւեալը կը գրեն Վիեննայի Բօնի լրագրին :
« Իրեն թէ Բեգրուրիի ձերու կուտի ժողովը համարձակեալ է կայսեր և անոր բռնած քաղաքականութեանը զէմ գանդապելու : Պատերազմին վերջին լուրերուն վրայ ձերակուտին գլխաւոր անդամներէն բազմութիւն անձինք իրենց կարծիքը յայտնելու գերէն յիշատակագիր մը գրելով կայսեր : Այս յիշատակագրին մէջ ըսուած է եղեր, թէ գանդակ անարձգողները չեն կրնար հաւելիլ կառավարութեան արտաքին քաղաքականութեանը, որուն բուր Ներսայս գէմ է : այսու ամենայնիւ կայսրը շարունակել կուզէ սա քաղաքականութիւնը, որուն պատասխանատուութիւնը չեն կրնար իրենց վրանին տանել : Աւտի կը ինքնընեն, որ կայսրը ընդունի Վստարիս ու Բրուսից անբաժանեց ինքզինքնը : Իր զօրքերը Գանուբեան գաւառներէն քաշէ, որն որ ինքն ալ խոստացեր էր, և աւսանկով վերջ տայ աս աղետալի պատերազմին : Շատ երեւելի մարդոց անուններ կուտան, որ սա յիշատակագիրը ստորագրեր են : Գահաժառանգ կայսր ըրդին ալ հաճութեամբ տուեր է, կը սեն : Չի գիտցուի թէ ինչ արդիւնք ունեցեր է աս յայտարարութիւնը : Կայսրը յիշատակագրին աննելուն պէս Գրանտիլլօ գացեր է, և դեռ Բեգրուրուրի գարձած չէ : »

ԻՍԱՆՆ ԼՈՒՐԵՐ

Երկրորդի կուտակալ բարձրագոյն տիւ Սայիտ փառչան կիրակի օրը մայրաքաղաքս հասաւ Աղեքսանդրիայէն, և Չրազանի կայսերական պալատին կից Թերէի բուսած պալատը իջաւ, որ Կորին փեսմարութեան համար պատրաստուած էր :
— Բնգրական Իմօ-Չուքենաւը անցեալ հինգշաբթի մայրաքաղաքս հասաւ Սալթայէն : Այս շաբէնաւը Սալթայէն 30 թիւստիմիտիկը մակույի առեր էր մինչև Կ. Պօլիս քաշելու բեքերու համար, բայց անոնց կէտը ձամբան կորսնցնելով, 15 հաւը միայն կրցաւ հաս հայրենի :
Աւրբաթ օրը սա շաբէնաւը Վստանա գնաց գաղղական պաշարակիր նաւ մը և բանի մը մակույի քաշելով :

ախը ձգեց, անոր տեղը նստաւ, ու սկսաւ ձին խաղցնելով գետնին վրայ տարածուած Օթամին չորս կողմը պըտրով : Բոլոր հանդիսատեսներն սկսան պուտլ, յաղթութիւնը ձերմակ ասպետինն է : Օթամ սրտմտած ոտք եւլաւ, սուրը քաշեց : Օթամի ալ թուրը ձեռքը ձիէն վար ցատկեց, և նոր կախ մը սկսաւ, սրուն մէջ ուժն ու ձարպիկութիւնը փոփոխակի կը յաղթանակէին : Սաղաւարտներուն փետուրները, բազումներուն (գուլազ) գամելը և զրահներուն վերտերը առջին անգին կը ցատկաւէին անհամար ուժգին հարուածներէն կտրուելով : Սուրին ծայրով կը դարնէին, սայրով կը դարնէին, ալին, ձախին, գլխուն, կուրծքին, ետ ետ կերթային, սուալ կուգային, կը չափուէին, կը մօտենային, կը պլուէին, օձերու նման կը գալարէին, առիւծներու պէս կը ձեծկուէին, ամեննէկ հարուածներն կրակ կը ցատկեր : Վերջապէս Օթամի վայրկեան մը ինքզինքը ամիտից, կանգ առաւ, ու կեղծ ձե

— Օսմանեան Նի-ճայիլի — թի-ճարէի շոգենաւը ուրբաթ օրը Վանայէն մայրաքաղաքս եկաւ 186 հիւանդ զին ուոր բերելով :

— Գաղղիական Սիւայի շոգենաւը երեքշաբթի օրը Սարսիլիայէն մայրաքաղաքս գալով 318 գաղղիական զորք բերաւ Վերլիպուէն :

— Արշալոյս Արարատեան պատուական լրագրին հրատարակիչ և տէր արժաւ նայաբ Գուկաս աղան Պալթաղարեան՝ երկուշաբթի օրը մայրաքաղաքէս Իլվիր դարձաւ իր նորաստան համեստուհի լծակցին հետ :

— Անցեալ շրեքշաբթի Օրթագեղ Հալէպէան մահատէի Յակոբ աղային լծակց համեստաբայլ Իսկուհի Հաւըմին յուզարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ : Հանգուցեալը 57 տարեկան էր և իր քրիստոնէական վարուքը և բարեպաշտութեամբ իր նմաններուն գովելի օրինակ և բարեհամբաւ գերդաստանին պարձանք եղած էր : Տասը տարիէ ՚ի վեր հիւանդ կեանք մը վարելէն ետև վերջապէս անցեալ շաբթու իր մահ կանայտ ընթացքը վճարեց խորին սպոյ և տրամուլեան մէջ թողելով իր բարեխիշտատի զաւկներն ու բոլոր ընտանիքը :

— Անցեալ շաբթու մայրաքաղաքին մէջ քօչուայէն մեռնողներուն թիւը 59 հոգի եղած է :

— Սպանիայի Բալիս գործադէտը որ քանի մը տարներու հետ կայսերական տէրութեան ծառայելու եկեր էր, և Գանուլի բանակը սպորտապետ Ի. օ. մէր փաշային բաժնի էր, Սպանիայի մէջ անցած մեծ անցքերը իմանալով, Սպանիա դարձեր է Վիեննայի ճամբով :

— Մայրաքաղաքին հրեաներէն բազմաթիւ անձինք իմանալով, որ իրենց ազգէն ոմանք իրենց մեծ Ռայպլին (Իսրայիլ պաշտ) համար Բ. Իրան գանգաւ ըրեր են, անցեալ հինգշաբթի Գուզը գացին՝ եղած գանգատին անիրաւ ըլլալը հասկըցնելու : Կայսերական կառավարութիւնը արժանաւոր ուշադրութիւն պի տի քննէ աս ինդիրը :

— Իվլիր շրջակաները կողոպտող ու հարստահարող հաշակաւոր Լյանի Գաթըրի աւազակապետը որ քանի մը ամիսէ ՚ի վեր Իվլիր բանտը գրուած էր, անցեալ շաբթու մայրաքաղաքս բերուեցաւ ու տեսչութեան բանտը գրուեցաւ մինչև որ դատաստանը տեսնուի :

— Գաղղիայ լրագրներուն մէջ հեռակալ նշանաւոր գէպը կը կարդանք : « Քանի մը օր կայ, Պ. Լամուլիս առտուան թղթաբերով իրեն եկած նամակները կը բանար կը կարդար քանի մը բարեկամներու առջեւը :

Նամակներուն մէջ մեծակ նամակի ծրար մը տեսնելով՝ մեկը ձգեց առանց բանալու, բտելով. « Անշուշտ մէջը բանաստեղծութիւն մը պիտի ըլլայ. » և աւելուց. « Խեղ մը պատահինք անգագար չորս կողմն առեր են, ու իրենց փորձի ու վարժութեան համար շարագրած գրութիւնները ինձի կը իրկեն կարծիքս հասկընալու համար : Սիրով ինչքին կը կատարէի, բայց ասոր համար ժամանակ ունենալու է գրածին կարգաւ, և ես ալ ժամանակ չունիմ : »

Պ. Լամուլիսի տպագրիչը, Պ. Բեռօթէն, որ ան միջոցին հոն նստեր էր, աղաչեց Պ. Լամուլիսի, որ ան ծրարը բանալու հրաման տայ իրեն թէ որ կը հաճի. « Արովհետեւ, ըսաւ, ես տպագրիչ ըլլալով, արհեստս իսկ պարտաւոր է երեւելի գրագէտներուն շաւիղը միշտ փնտրելու. նայիմ ՚ի նչ պէս գրութիւն է աս, տպագրութե պատուոյ արժանի է : »

Պ. Լամուլիսի հրաման տուաւ : Տպագրիչը կնիքը փրցուց, ու աղչեցաւ մնայ զարմանքէն, երբոր ծրարին մէջ 25 հազար ֆրանք տարեկան եկամուտի արձանագրութիւն մը գրուաւ տէրութեան սրտուոյ տուամաբին մէջ Պ. Լամուլիսի անունովը :

Այ փառաւոր ու պայծառ նուէրին վրայ հետեւեալ անանուն մակագիրը կար. Ժիրնիպէանց պապական հոյակապ կեղեկին կը նորի՛ն՝ անոր գեղեցիկ հանձարին շարժողութիւն ձեռք. Յ. Ե. Ե. :

— Անգղիական Իչմեթիս լրագիրը Արարատ աս տարուան արմտեաց հունձքերուն վիճակին վրայ խիստ օգտակար տեղեկութիւններ կուտայ :

« Օրերուն շոկուելէն ՚ի վեր, կըսէ, հունձքերուն երեւոյթը շատ փոխուեցաւ : Գաղղիայ հարաւային գաւառներուն մէջ, Սպանիայի ու Իտալիայի մէջ, նոյնպէս Ալեքիկայի հարաւային կողմերը շատ յաւաջ գնաց, և առնուած ամեն տեղեկութիւններէն կը հասկցուի, որ ընդհանրապէս աղէկ պիտի ըլլայ :

Գերմանիայի մէջ հաճարը (չալտոր) հնձուեցաւ և բաւական առատ պիտի ըլլայ : Այս տարի ամեն տեղ կարգէ գուրս տարածութեամբ արմը ախր ցտեռուեցան. ուստի տարակից չի կայ, որ խիստ շատ հունձք պիտի ըլլայ : Սեր փաճառանոցներուն մէջ արմըսեաց չի կընրը արգէն շատ իջան : Ալեքիկայիներն ալ նոյնպէս իջած են, և կը յուսանք որ ամեն տեղ ալ նոյնը պիտի ըլլայ :

Իչմեթիս լրագիրը ասոնք ըսելէն և տես խօսքը այսպէս կը վերջապուեն : « Այժմեան պատերազմը անտարա-

կոյս Արարատի հաղորդակցութիւնները պիտի խափանէ քանի մը երկիրներու հետ, ուսկից Արարատ արմտիք կ'առնէր : Բայց բանակներուն աւերը տրկանները մեկըի առնելով, այս խափանումը մեծ ազդեցութիւն մը չի կրնար ընել արմտեաց գիներուն վրայ. ըստ որում պակասին տեղը Ալեքիկա եւեթը կրնայ լեցունել : »

— Անգղիայ հասարակաց խորհրդաւորնին ինչորով շոգենաւուց վերատեսչութեան կողմէն շինուած ու խորհրդարանին հրամանաւ լրագրներուն մէջ հրատարակուած տեղեկագրի մը նայելով, 1854 ին յունուար 1 ին՝ բոլոր Անգղիայ ունեցած շոգենաւներուն թիւը 1375 ի կ'ըլլէ :

Սինակ Լոնտրա 407 շոգենաւ ունի, որ ըսել է բոլոր շոգենաւներուն գրեթէ երեք մասին մէկը : Բայց պէտք է գիտել, որ աս Լոնտրայի շոգենաւներուն մեծ մասը ուրիշ նաւահանդիստներու մէջ կը գործածուին : Ինչպէս են թերակողման և Արեւելեան Բնիլըութեան շոգենաւները, որոնց բուն տեղը Սաութեմթըն է : Պէտք է գիտել նաև, որ ասոնց ամենն ալ ծովու նաւեր չեն, ըստ որում թայմը գետին վրայ շատ փոքրիկ շոգենաւներ կը բանին և երթեկուցութեան սահմանին ալ կարճ է :

Շոգենաւներուն վերջիշեալ գուժարին մէջէն 1047 հատը՝ յատկապէս Անգղիայինն է, 207 ը՝ Սկոտլանդինն է, իսկ 121 ը՝ Իռլանդիայինն է :

Գարնեալ նոյն գուժարէն 980 հատը փայտէ շինուած են, 293 ը երկաթէ. 155 ը պտուտակաւոր են և 1220 ը անուաւոր :

Արեւելեան շոգենաւներուն առաջինը Լոնտրայի մէջ 1838 ին շինուեցաւ թայմը գետին վրայ բանելու համար : Բայց զխաւսարպէս 1848 էն ՚ի վեր է որ երկաթէ շոգենաւները սկսան փայտաշէններուն տեղը անցնել :

Պտուտակին գործածութիւնը աւելել նոր է. 1850 էն վեր չէլըն : Արեւաւորն պատասխակաւոր շոգենաւները՝ գրեթէ մի և նոյն ժամանակի մէջ Քլայտի ու թայմը նաւարաններէն ելան :

— Ալեքիկայի Նիւ Եորք քաղաքին մէջ աս միջոցին ետիւր մեծ գործարան կայ հոփանեակի (օմեկա), որոնք տարին մեքենայի զօրութեամբ միլիոն ու կէս տարի արարող կը հանեն : Այ գործարաններուն ամենէն մեծը 350 հոգի կը բանեցնէ, 250 ը աղիկ : Տարւոյն մեծ մասը՝ աս ահագին գործարանը օրը 1,200—1,500 հոփանեակ կը հանէ : Տարին 1,500,000 ֆրանքի մետաքս ու կտաւ կը գործածէ : Այն հոփանեակը

112 զանազան մասունքներէ կը բաղկանայ, ու ըննալէն առաջ՝ հարկուրէն աւելի հոգւոյ ձեռքէ կ'անցնի : Այն մէկ գործաւորներուն վարձքը վրայէ վրայ շարաթիւ 25 ֆրանքի չափ է :

ՎԵՐՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝ Արարատի փողերանոցին վերատեսչ սուչ վեմափայլ Հասիպ փաշան՝ Ի. Ֆ. գափ նաղըրի անուանեցաւ :

Ի. Ֆ. գափ նաղըրի Օ. իվլեր էֆէնտին արքունի փողերանոցին վերատեսչ անուանեցաւ :

ՏԱՆՈՒՑՈՒՄՆ



50,000 բժշկութիւն առանց դեղի, առանց ցաւի և ծախոց

Լոնտրայի Տիւ Պաուլի անուն գեղադորմին

ՌԵՎԱԼԵՆՅԱՆ ԱՐԱՊԻՐԱՆ

բուժած քաղցրամորտ և կաղուրէն տղաբոլբ :

Այս անբարոր և իրաւոր բերանար ալեւրը Արարատի ամեն երկիրներուն մէջ մեծ յաշտութիւն գրած է, որուն վրայ էն քննորդներուն օրէ օր շարունակ և առաջին բժշկայ և ուրիշ ամեն կարգէ անչափ քաղցրամորտ վնասանքները :

Այս ալեւրը ապահով բէր մըն է բժոժարաններուն, սպանիսի ցաւերուն և քաղցրութեան (շիւթիւն), իրաւորներն ետք և յղըթեան ժամանակ սրտի խառնուելուն, մաղապի (պաղաւ), սովորական անբարորութեան, ընդուն մաղապի և իրարայն կիւսարորութեան ներք, իրաւորութիւն, պտուտակութեան (մայաւը), ուստաութեան, ընդունութեան, և խոտիկապի (Վեռայ էլիւ), ընտանութեան (Լոնտրալի), խոյլ (արաւա) անբարորութեան կայն :

Օսմանեան բժշկներ այս ալեւրին ըրած բժշկութիւններուն վնասութիւն է Տօքիէօս Իւրիլ իրաւորութեան. Տօքիէօս Ալի-բէր հալէ, իրաւոր, մաղապի և բոլորեմանց. Տօքիէօս Վալի-բէր՝ սպանիսի քաղցրութիւն. քաւսապո-Տօքիէօս Իւրա՝ սովորական անբարորութեան. Տօքիէօս Հարիլի՝ փորձարորութեան. Տօքիէօս Շօրլիլի՝ ընդունութեան (սըգա) կայն :

Այս բէրը կը ծախուի Կ. Պօլիս Լանեախանի բիւրոյր Պ. Օիլիէր բէրալաճառին խանութի :

մը բանեցնելով Օթամիս վրայ ցատկեց, գետինը զարկաւ ու զէնքը ձեռքէն առաւ : Օթամ գաչեց : Ո՛վ ձեր մակ սապետ, գուն պիտի ըլլաւ Բաբեանի թագաւոր : Թագուհին ջըն ծուլիւնը անպատմելի էր : Եւ ին կապոյտ ու ձերմակ սապետները, իւրաքանչիւրն իրենց սենեակը տարին ինչպէս մէկալներն ալ, օրինաց համաձայն : Համր սպասաւորներ եկան առնոց սպասաւորութիւն ընելու և կիւրիւր բերին : Արմաք երեւակայել թէ, Օթամիկին սպասաւորութիւնը նոցը թագուհին պղտիկ համր էր : Եւ շքը համրերը ասոնք մինակ թողուցին գացին, որպէս զի քնանան ու հանգչին մինչև հետեւեալ օրը, ուր յաղթողը մտաբտին պիտի ներկայարար իր նշանաբերը բաղգատելու և ինքզինքը ճանչցնելու համար :

Օթամիկ թէ և սիրահար էր, այսու ամենայնիւ քնացաւ շատ յաջնած ըլլալուն համար : Իրապատ որ քովն սենեակը պատկեր էր, բնաւ չբնա-

ցաւ : Իրչերը ելաւ, Օթամիկին սենեակը մտաւ, անոր ձերմակ զրահը նըշանաբերին հետ առաւ, ու անոնց տեղը իր կանանց զէնքերը թողուց : Արշալոյր ծագածին պէս, ելաւ կոկորտով մտաբտին գնաց, ու հասկցուց անոր թէ ինքն է յաղթողը : Այնչէր յուսար անկէ աս բանը. սակայն Իրապատ յաղթող հաշակուեցաւ երբոր Օթամիկ անցին իր սենեակը գետ կը քնանար : Ապարտէն արիւնցաւ ու յուսահատած Բաբեան գործաւ : Արշալոյր գրեթէ մրցարանին նստարանները մարդ չէր մնացած՝ երբոր Օթամիկ արթնցաւ : Օհնքերը փնտուց ու միայն կանանց զրահ մը գտաւ : Արիւր հազուաւ չունենալով՝ հարկադրեցաւ զանկի հագնելու. և վերջին աստիճան զարմացած ու զայրացած՝ այն կերպարանքով սենեակէն դուրս ելաւ : Նստարաններուն վրայ ու մրցարանին մէջ մնացած մարդիկը սկսան շէլ ու չորս կողմի առնելով նախատել ու ծաղր ու ծանակ ընել զանկի : Արբեք

մարդ մը այնչափ դառն անարգանք չէր կրած : Վերջապէս Օթամիկին համբերութիւնը հատաւ. թորովը նախատիւ ամբարը ցրուեց հալածեց : Բայց ինքն ինչ ընելքը չէր գիտեր : Թագուհին տեսնելը անկարելի էր. անոր ընծայած ձերմակ սպասալինուութիւնը պահանջել անհնար էր, ինչու որ զանկի մասնած, կ'ըլլար : Աւստի երբոր թագուհին խոր սրտմութեան մէջ ընկզմած էր, Օթամիկ ալ վերջին աստիճան զայրացած ու խուլած էր : Միտա Եփրատայ եղբորը սրտովը մը տածելով, որ իր սաղը պիտի անկարձան թշուաւութեան մը գտաւարտամ էր : Քաղած ամեն ձախորդութիւնները միտքը կը բերէր, միակնիկներն ատող կնկանը գիտուածէն՝ մինչև իր սպասալինութիւններուն գողցուիլը : Ահաւասիկ, կ'ըսէր, քուսնէն ուլ արթնալուն պատուը : Թէորքիչ մը պակաս քնանայի, Բաբեանի թագաւոր կ'ըլլայի ու Ապարտէն կ'առնէի : Արեմն գիտութիւնները,

բարի վարքը և քաղութիւնը միշտ գեղադրութեան պատճառ եղան : Վերջապէս նախախնամութեան գէժ ալ տրտունջ ելաւ բերնէն, և հաւատալը կուգար, որ անագորոյն նախաւահանութիւն մը այս աշխարհքս կառավարելով, բարիները կը հալածէ ու կանանց սապետները երջանիկ կընէ : Վիշտերէն մէկն ալ հազած կաւանանց սպասալինութիւն էր, որ այնչափ խոյսատակութիւն բերաւ իրեն : Վաճառական մը՝ տեսաւ, շնչին գընով մը զանկի ծախեց, ու տեղը պատմուածան մը և երկայն խոյր մը գընեց : Օթամիկ աս կերպարանքով Եփրատայ եղբորը կը պարտէր յուսահատ վիճակի մէջ, և սրտէն նախախնամութեան գէժ կը դանգատէր անգագար զնիքը հալածելուն համար :

(Պիտի շարունակութիւն)

ԽՄԲԱՂԻՐ-ՏԵՕՐԵՆ

Կ. Ս. ԻՌԹԻՃԵԱՆ